

հել կամիք, եւ կարեք ինչ լաւ սպաս ցուցանել արքայից արքայի, եւ հնարեք զՎահան սպանանել՝ գտանիցեք ի թագաւորէն պարգեւս եւ պատիւս, զոր ոչ է գտեալ ձեր ուրուք ի նախնեաց ի թագաւորաց. յորում վայելեալ ուրախանայք խաղաղութեամբ, դուք եւ ձեր որդիքն մինչեւ յաւիտեան»:

11 Եւ լուեալ զայսպիսի պատգամս երկոցունց Կամսարականացն ի Չաւրագլխէն Պարսից Շապիոյ, թեպէտ այլ եւ այլ պատասխանիս առնէին բանիցն, խաբելով զՇապուհ ի բազում աւուրս, ապա գլուխ հաստատապէս պատգամին Շապիոյ, երկոքեան անշարժ հաստատեալք ի հաւատս, տէրն Շիրակայ Ներսէս եւ Յրահատ¹, զայս յղէին, թէ «Մեր գործ եւ աշխատութիւն չէ վասն երկրաւոր ինչ վայելից, եւ ոչ վասն կնոջ եւ որդւոյ, որ ձեզ ծանր թուի եւ կարեւոր. բայց խորհուրդ է հաւատոյս մերոյ մեծ եւ պատուական: 12 Մեզ, առ ահաւոր այնպիսի խորհրդոյն² սիրով՝ ամենայն ինչ կենցաղոյս վայելչութիւնք փոքր թուին եւ ոչինչ, աշխարհ եւ կին եւ ստացուածք եւ մեծութիւն: 13 Չի եթէ ոչ հաւաստեալ տեսանեաք, եթէ երկինք եւ երկիր եւ ամենայն որ ի նոսա է, չէ համեմատ այնմ պատուականութեան, որում մեք ցանկամք՝ չեաք այնքան անզգայք, թէ ոչ կարեաք խաբել զձեզ, որպէս եւ այլ հացկատակեանդ որ առ ձեզ են, եւ առնուլ կապի՞ծ մի մոխիր եւ տալ ցաղախին մի մեր, որպէս նա զայն կամեր՝ պղծել. եւ մեք սնոտի փառաւք ի ձեռք առ վայր մի վայելեաք եւ պայծառք երեւեաք, եւ ապա գլաւիտենից կորուստն կորնչեաք չարաչար: 14 Այլ վասն կանանցդ մերոց տամք ձեզ նշան ինչ, եւ ձեր փորձեալ քաջ քննեցեք. զի եթէ արդարեւ մեք յաղագս հաւատոյն, զոր սիրեմք եւ ունիմք հաստատապէս, եւ վասն այնր տենչալի յուսոյն եւ փառացն կրեմք զայս վիշտս, եւ հաճոյ է գործս մեր ճշմարտին Աստուծոյ եւ ընդունելի՝ զմեզ փրկէ ի նեղութենէս, եւ զկանայսդ մեր պահէ ամենայն սրբութեամբ եւ տայ ցմեզ. ապա թէ ոչ այդպէս լինի՝ մերում թերահաւատութեան մեղադրեսցուք, եւ մի՛ ինչ ձերում բռնութեանդ եւ սաստից»:

15 Եւ զայս բանս այսպէս յղեալ երկոցուն³ Կամսարական եղբարցն առ Յազարաւուխտ՝ ինքեանք եւս առաւել քան զառաջինն, անձամբ եւ զայլս յորդորելով, փոյթք եւ պատրաստք էին արբանեկութեան⁴ զաւրավարին Յայոց Վահանայ Մամիկոնենի՝ զամենայն գործ, զոր եւ⁵ հրամայէր նոցա:

ՁԱ. Եւ զհետ զնացիցն Յազարաւուխտոյ ի Վիրս՝ մնայր Շապուհ յՌբաղս, եւ ջանայր կատարել զհրամանն Յազարաւուխտոյ, եւ որսայր զՄամիկոնեանն Վահան՝ գտանել զնա ի գեղծի եւ սպանանել. եւ ոչ ինչ լինէր

1 Ձ. հրատ

2 Ձ. խորհրդոյն

3 ՏՏ. երկոցունց

4 Ձ. առբանեկութեան

5 ՏՏ. որ եւ